

Պապը Սերասֆերի

խառնանքին մի տարի բանտարկութեանը:

—Մեր հոգևորականների քաջագործութիւնները... թիֆլիզի քահանաները մինքն ջրօրհնէքին մտնում է մի աղքատուն և սովորական աղօթքներ ասելուց յետոյ, անցնում է խոհանոց, և այդտեղ որպէս «կողոպուրտ» պահանջում է իր համար խոհանոցի մէջ գըտնելված դանազան ընտանի գործիքներ, ինչպէս օրինակ «քիւրա» (պլիտա) և այլն, և հետք տուն է տանում... Ասում են որ սա հարուստ քահանաներից մինն էր:

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻ

«Ղալարի բնակիչները» ինչպէս խոստացել էի անցեալ նամակումս, այս անգամ կամենում եմ խոսել Ղալարի միւս բնակիչների մասին, որոնք են՝

1. «Վերացիք»։ Սոքա թուով մօտ երեսուն տուն են, բայց ինչպէս երևում է, առաջ աւելի շատ են եղել, քան զայնքից փոքր ինչ հեռի կայ մի գերեզմանատուն, որ Հայերը անուանում են «Վերացի հանգստարան» այդ սեղգըտնվում է և մի եկեղեցի։ Մի այլ եկեղեցի, որ գտնվում է համարեա քաղաքի կենդրոնում, մինչև այժմ էլ Հայերի մէջ կոչվում է «Վերացի Աստուածածին», թէ և ժամասացութիւնը թէ այստեղ և թէ առաջինում ուսուցիչներ է լինում, վերացիքը միմեանց մէջ խօսում են իւրեանց մայրենի լեզուով։ Պարագլուխ են ըստ մեծի մասին այգեգործութեամբ։ Աւելի բազմաթիւ են նոքա Ղալարի շրջակայքում, այդպէս «Սասուիւ» (երևի սօվելի-գիւղ-բառից է առաջացած) գիւղում մօտ վաթսուսու տուն, Սարափանում (Շօկով) նոյնպէս մօտ վաթսուսու տուն։ Ինչ է եղել դոյն գաղթականութեան պատճառով մի այնպիսի ժամանակ, երբ վերաբնակեցնում էին քաղաքական կենդրոն, յայտնի չէ ինչ, բայց կարելի է կարծել, որ նոքա, ինչպէս և վրաստանցի Հայերը, գաղթել են այն ժամանակ, երբ թիֆլիզը կամ այլ վրաց քաղաքները ենթարկվում էին Պարսից աւերմունքներին։

2. «Լեկզիք»։ Սոքա առաջին անգամ ոտք դրին Ղալար Ռուսաց և Լեկզիների երկարատե պատերազմների ժամանակ։ 1831 թ. նոյեմբերի 10 ին, երբ Ղալարի անհոգ բնակիչները աղօթք էին անում եկեղեցում, և երկար խաղաղութեան ընտելացած լինելով, կամ բողոքովին անյայտացած էին նոյա գէնքերը կամ ժանգոտած կախուած էին պատերից, յանկարծ յարձակուեցան Լեկզիների մի մեծ խումբ Ղօղի Մօլլաի (Շամիլի նախորդի) առաջնորդութեամբ և մեծ արեւհեղութիւն ու յափշտակութիւն գործեցին քաղաքի մէջ, մինչև որ բնակիչները կարողացան թափուել Ղալարի հողապատ ամրոցը (Սանգար)։ Այդ ասպատակութիւնից յետոյ թէպէտ նոքա հեռացան, բայց ոչ բոլորովին, դեռ երկար տարիներ նոքա չընկնում էին քաղաքում իբրեւ ամենահամարձակ ազգականներ, կար այնպիսի ժամանակ, երբ արեւը մայր մըտնելուց յետոյ այլ ևս անկարելի էր լինում փողոց դուրս գալ, առանց վրաստանգի ենթարկուելու։ Այդիների միջանցքներում ամէն մի խիտածաւից արեւն էր կաթում։ Բայց վերջպէս նոքա էլ ճնշուեցին։ Արդէն 10-15 տարի է, որ անհետացել է նոյա կատաղութիւնը և սկսուել է, կարելի է ասել, նոյա երրորդ շրջանը խաղաղ կեն-

ցաղափարութիւնը։ Նոքա կազմում են քաղաքի մի առանձին փոքրիկ արուարձանը և պարագլուխ են զինագործութեամբ, դարբնութեամբ և այլն։ Ամառը, չը դիմանալով քաղաքի անտանելի շոքին, նոքա հեռանում են իւրեանց հայրենիք՝ Դաղստանի հովիւները, իսկ աշնանը դարձեալ վերադառնում են։ Միմեանց մէջ խօսում են լեկզերէն, որ շատ կոշտ և կոկորդափոս հնչիւններ ունի, իսկ քաղաքի միւս բնակիչների հետ նոյա յարաբերութիւնը թուրքերէն լեզուով է լինում։ Դաւանում են մահմետական կրօն։

3. «Նոզայներ»։ Նոզայի միջակ հասակը, դեղին գոյնը, երկարացրած աչքերը, տափակ և փոքր ինչ դէպի վեր յցուած քիթը, լայն, տափակ, բոլորովին անմազ կամ շատ փոքրածաղ երեսը յայտնի ցոյց են տալիս նորա մոնղոլական ծագումը։ Սոքա բաւական բազմաթիւ են և այնքան մեծ յարաբերութիւններ ունեն քաղաքի միւս բնակիչների հետ, որ սոքա համարեա ամէնքն էլ քաջ ծանօթ են նոզայերէն լեզուին մեծից մինչև փոքր։ Այս հանգամանքը շատ օտարոտի է երևում, եթէ աչքի առաջ ունենաք այն, որ Նոզայները այստեղի բնիկների մի այնպիսի ստորին դասն են կազմում որ համարեա բոլորովին զուրկ է սեփականութիւնից, բացի մի աննշան և կեղտոտ թաղից, որ կոչվում է «Եաման աւուլ» (վատ թաղ), բայց նոյա այդպիսի մեծ ազդեցութիւնը բնիկների լեզուի վերայ բացատրվում է նորանով, որ նոքա կազմում են համարեա միակ ծառայները բոլոր քաղաքում։ 10-12 տարեկան հասակում երախայն բերվում է քաղաք տնային ծառայութիւն սովորելու։ Նա սկզբում ստանում է միայն իւր օրական հօցը, իսկ այնուհետև տարեկան հինգ մանէթից սկսած տարեց տարի աւելանում է նորա ուճիկը, Հասակաւորները պարագլուխ են այգիներում մշակութիւն անելով։ Նոյա վարձատրութեան մասին ես խօսել եմ առաջին նամակներում։ Թէ որքան նշանակութիւն ունի նոյա տնտեսական գրութեան մէջ Ղալարի այգեգործութիւնը, կարելի է տեսնել հետեւալ համեմատութիւնից. մշակը որ տարուայ ամբողջ ձմեռնային կէտը տանը ծառայելով բաւականում է 15 ռուբլիով չի համաձայնում ամբողջ տարին 60 ռուբլիով ծառայել։ Այսքան քաղաքաբնակ նոզայների մասին, դառնանք այժմ դէպի դաշտաբնակները։

Դաշտաբնակ նոզայները ներկայացնում են թափառական ժողովուրդի մեկատարեալ տիպ։ Նոքա ունեն գիւղեր որոնք կոչվում են Աւուլ, իսկ առաւել մեծերը իւրթ. աւելի մեծ մասը թափառական կենանք են վարում։ Նոյա շարժական տները, որոնք ունեն բոլոր ձև գմբեթման ծայրով և պատած են լինում թաղիքով կամ փսիատով, կոչվում են «օթով»։ Երբեմն էլ պատահում են փոքրիկ և կոնուսաձև տներ, որոնք կոչվում են «դշ»։ Այդ շարժական տներով անընդհատ չընկնում են նոքա Ղալարի շրջակայքի ընդարձակ սպառազաշտերի վերայ արածելով իւրեանց բազմաթիւ եղների, ձիերի և մանաւանդ ոչխարների հօտերը։ Երբ մի տեղի խոտը սպառվում է, նոքա բարձրում են իւրեանց օթովները սայլերի վերայ և գնում են մի այլ տեղ։ Այն միջոցին երբ տղամարդիք պատրաստ են անասնապահութեամբ կա-

նայքը իւրեանց կովերի և խաշների առատ կաթից շինում են իւղ, պանիր, մածուն և այլն։ Ամառները նոքա բերում են այդ քաղաք և վաճառում են փողոցից փողոց մանածելով։

Այս նկարագրութիւնից կարելի է արդէն գուշակել, որ նոզայները կանգնած են զարգացման շատ ստոր աստիճանի վերայ, կրօնով մահմետական են նոքա, և եզոնները թուրքերէն, փոքր ինչ ազաւաղած և փափուկ հնչիւնները աւելի կոշտացրած (գեալ-գէլ) գաբու-դափու և այլն)։

Ես կը կամենայի մի քանի խօսք ասել և Ղալարի շրջակայ միւս ազգերի մասին, բայց նախկին սաստիկ երկարանում է, ուստի միւս անգամ։

1873 թ. յունվարի 21

Մի Ղալարեցի

Յ. Դ. Հեռագրական գծի թելը վերադրվակաղից հասել է մինչև Ղալար. դեկտեմբերի 17 ից սկսուել նորա գործադրութիւնը։

Այս տեղ շատ բաւական թանգութիւն է, հօցի գրվածքէն արժէ ցնայէլ, որ համարեա կրկնապատիկ աւելի թանգ է, քան թէ սովորական գինը։

Մ. Ղ.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒԹ

Ես իմ նամակների մէջ միայն տեսագրական և ուսուցական ընդհանուր նկարագիրը հաղորդեցի ձեզ ՚ի բաց թողնելով ժողովուրդի առ հասարակ վարքը ու բարքը, մտաւորական դրութիւնը, այդ պակասը լրացնելու համար համառօտապէս պիտի խօսեմ այստեղ առաջ թուրքերի վրայ որոնք բնակիչների մեծ մասն են կազմում, և յետոյ Հայերի վերայ։

Թուրքերը երկու կրօնական ցեղից են—Սիւննի և Շիա կամ Տաճիկ և Պարսիկ. այդ երկուսի մէջ տարբերութիւնը քիչ չէ և թէ կրօնական համոզմունքով և արարողութիւնով չոկնվում են միմեանցից. թողնելով խնդրել թէ ինչումն է կայանում այդ երկու ազգերի կրօնի հիմքը և իրարից տարբերութիւնը, ես միայն սա եմ կարելոք համարում ասել, որ Սիւննիի կրօնական համոզմունքը որքան էլ տգէտ լինէր, այնու ամենայնիւ քիչն չէ շատ աւելի ներողամտ է դէպի օտար ազգութիւնները և Տաճիկը չի խորշում քրիստոնէի հետ նստել վերկենալու, թէյ խմելու և հաց ուտելու (բացի խմիչէ և խօզի միս գործածելուց), իսկ Պարսիկը խորշելով այդ բոլորից սրբապղծութիւն է համարում քրիստոնէի հետ նստել վեր կենալը անգամ. թէ և այդպիսի խստութիւն ճշտութիւնով չեն կարողանում պահել այստեղ, որովհետեւ Հայերի հետ յարաբերութիւններ ունենալու ստիպուած են և ակամայ յանձն են առնում, բայց ով որ եղած է Պարսկաստանի քաղաքներում, տեսած է անշուշտ Պարսիկների այդ ծիսապաշտութիւնը։

Այդ երկու ազգութիւնները միմեանց հետ միշտ կրօնական թշնամութիւններ ունին և այդ թշնամութիւնները աւելի սոսկալի կերպարանք են ստանում Պարսիկների այն ծիսակատարութեան ժամանակ, որը Մուհամբէմի սուրբ օրեր է կոչվում։ Այդ արարողութիւնը ցոյց է տալիս դոյն կրօնի խաւար և տգէտ լինելը։ Այդ օրերին քիչ է պատահել որ մէկմէկու վրայ են յարձակուել և այս զատճառաւ քաղաքական իշխանութիւնը զօրեղ

միջոցներ է գործ դնում այդ հանդէսի ժամանակ խռովութիւն չպատահելու համար։

Դոքա ունին իրենց համար մէջէտ առանձին, և մէջիտի կողքին ցած, սեպատերով մի երկու սենեակ կան չինած, այդ է նոյա ուսումնարանը, եթէ այդ անունը կարելի է տալ։ Այստեղ սովորեցնում է «մօլլան» ճպօտը ձեռնի աղաղակների և վիվուկների մէջ խլամախան մատաղ սերնդին դարեւոր աւերաբապշտական քաղափարներով...։

Աւելորդ է ասել, որ թուրքերի կանայք, ենթարկուած լինելով փախուած կենքերին, մնացած են տգէտ և խաւար։

Գանք հայերին։

Թուրքերը խանութեան ժամանակ եղած են ներգործող ոյժը թէ հայի բնաւորութեան և կենքի վերայ, այդ բանը, ինչպէս և ուրիշ տեղերում յայտնի երևում է և այստեղ, Հայը չի շարժվում հասարակական կեանքով, նա իր ընտանիքից դուրս էլ ոչինչ չի նկատում, նա ապրում է միայն իրեն համար—այդ է մեր հայերի ընդհանուր ակտը, այդ է մեր դժբաղդ դատակնիքը։

Բարեբաղդաբար կայ Նուխուայ մէջ մի հոգևոր հայոց ուսումնարան, այդտեղ միայն սովորեցնում են հայերէն և ուսուցիչներ լեզու, կրօնագիտութիւն և վայելչագրութիւն և փոքր ինչ թըւաբանութիւն, կամ նոյնպէս տէրութեան ծախքով հիմնած մի գաւառական ուսումնարան և սովորեցնում են այստեղ Ռուսերէն, Հայերէն և թուրքերէն և մի քանի առարկաներ թուաբանութեան տշխարհագրութիւն և Սուլայն պէտք է տեսլ որ այդ ուսումնարանները չեն կարող յառաջադիմել, ուրովհետեւ ժողովուրդը առհասարակ անհօգ է մտաւորական զարգացման վրայ, և նա չի հասկանում այդ անհրաժեշտ պիտոյքը որովհետեւ բացի նիւթական շահից նորա համար ուրիշ շահ չկայ։ Մոռացայ յիշել որ Նուխուայ մէջ երկու Հայոց եկեղեցի կայ և մէկն էլ Ռուսաց։

Իսկ աղկերանց համար ուսումնարան չկայ, որովհետեւ մեր հայերի խելապատիկում այսպիսի մի միտք է տիրապետում—«թէ աղկիւլ ինչ, ուսումն ինչ»։

Յոյս ունիմք որ այն նոր տարին անօգուտ չի անցնիլ Նուխուայ համար և զարթնելով իրենց մտաւոր թմբութիւնից հոգս կը քաշեն իրենց որդւոց մտաւորական և բարոյական կրթութեան վերայ լաւ հասկանալով այս խորհրդաւոր խօսքերը թէ՛ այնտեղ է փողը, հարստութիւնը, արժանաւոր պարծանքը, որտեղ կան այս երկու աշխարհաչէն բարեբաղդներ— ուսումը և դատարարականութիւնը։

1873. 5 յունվար

Մ. Գ. Ասլանեան

Յ. Դ. Լսում ենք որ մի քանի երիտասարդներ դիտաւորութիւն ունին այստեղ մի ընթերցարան բաց անելու, ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն այդ նոր շարժումին։

ՍԱՀԻՊ ՂԱԶԷԹԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍՅԱՆ